ՀԱՅԿԱԶՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

(Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ)

# ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

«Ողբասցեն սարոյք, զի մայրք գլորեցան»:

(ԶԱՔԱՐԻԱ, ԺԱ. 2)

Հայաստանյայց Եկեղեցվո հոգևոր անդաստանին մեջեն այսօր կիյնա ամենահսկա կաղնին, որուն հովանիին ներքև էր, որ կպատսպարվեին կիզիչ արևեն այրվող իր մատաղ տունկերը: Այս հսկա կաղնիին տապալումին ձայնը հասավ անմիջապես աշխարհի չորս կողմերը, ինչպես նաև Քրիստոսի ոտնակոխած Ս. Երկիրը՝ Երուսաղեմ:



ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ Է ԿԱՐԴՈՒՄ

Հանուն Երուսաղեմի սրբազումար և զինվորյալ միաբանության և հանուն Հորդանանու և Իսրայելի մեր սիրելի ժողովուրդին, եկած ենք Ս. Երկրեն, բերելու համար մեր սրբավայրերու ու մեր ժողովուրդի խունկն ու աղոթքը հոգիին Անոր, որ կիյնա անշընչացյալ այս պահուս մեր աչքերուն առջև:

Քրիստոսի ծննդավայրեն, Ս. Բեթղեհեմեն ու Մսուրեն, Հորդանան սուրբ գետեն, Փորձության, Թաբորի և Համբարձման ու Սիոնի սուրբ լեռներեն, Ս. Գողգոթայեն ու Ս. Գերեզմանեն, Սրբոց Հակոբյանց փառապանծ տաճարեն և Ս. Գլխադիրեն, և Քրիստոսի տնօրինական բոլոր սրբավայրերեն ու ժողովուրդեն, խունկ ու աղոթք բերած ենք ծխելու և մատուցելու այս սրբավայրին մեջը, ուր կսավառնի Ձեր կենդանի հոգին Հայաստան աշխարհի վերևը:

Ձեր մահովը այրիացած Ս. Լուսավորչի Աթոռը, Վեհափա՛ռ Տեր, այսօր սուգի շղարշներով պատված է, և նստած նման անտիրական այրիի մը, որ կուլա իր անդարմանելի կորուստին համար:

Ո՜վ հայրենասեր Մեծ Հայրապետ, կհանգչիք այժմ երկու մեծ հայրենասեր հայրապետներու՝ Խրիմյանի և Ներսես Աշտարակեցիի կողքին, ու հայ հոգևորականությունը

և ժողովուրդը ծունկի եկած Ձեր դագաղին առջևը, կողբան իրենց հոգևոր Հորը և հայրենյաց պաշտպանին անդարմանելի կորուստը:

Ծաղկյալ և արևաշող Հայաստան աշխարհը սուգի մեջ է այսօր իր հոգևոր զավակին հանկարծական բաժանումին, որ իր ծաղկումին ու պաշտպանությանը համար աշխատեցավ Իր բոլոր հոգիովը:

Բովանդակ քրիստոնյա և օտար աշխարհը այսօր արցունքի և խռովքի մեջ է՝ ի լուր այս սև դագաղին:

Ողբա՛ հայ ժողովուրդ, ողբա՛ հայ Հայրենիք, ողբա՛ քրիստոնյա աշխարհ, և ողբացե՛ք մանավանդ հայ հոգևորականություն և Իր շատ սիրելի Հոգևոր Ճեմարանի աշակերտություն, և թող Ձեր այդ ողբերուն մեջեն ինկած արցունքի շիթերը իջնեն որպես ցող, բոլոր այն սգավոր հոգիներուն և սիրտերուն մեջ, թարմացնելու համար անոնց թառամած հոգիները:

Աղոթե՛ հայ ժողովուրդ, աղոթե՛ բովանդակ մարդկություն, որ Աստված լուսավորե հոգին մեծ Հոգևորականին և Հայրենասերին: Թող վերցնե Աստված շուտով սուգի քողը Ս. Լուսավորչի Աթոռին վրայեն, և անոր վրա բազմեցնե իր արժանավոր հաջորդը: Ամեն:

ՊԻՏԵՐԻՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ)

# ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՎՇՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ամենակարող Աստուծո կամքով ավարտեց Իր երկրային ճանապարհորդությունը և հավիտենականության գիրկն անցավ Ամենայն Հայոց Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սրբություն Գևորգ Զ.ը, որի դագաղը շրջապատել ենք մենք այժմ: Մենք գիտենք, որ յուրաքանչյուրը մեզանից պիտի մահանա, թողնի ժամանակավոր այս աշխարհը, և մեր երկրային կյանքի նպատակն է՝ նախապատրաստել մեզ հավիտենական կյանքի, երկնային և փառաց թագավորության համար, ուր, մենք հավատում ենք, հավիտենապես պիտի բնակություն հաստատի Հանգուցյալի հոգին: Սակայն, ըստ



ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՊԻՏԵՐԻՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ Է ԿԱՐԴՈՒՄ